

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ Բրազիլիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,
ձգտելով զարգացնել եւ ամրապնդել երկու երկրների միջեւ առկա բարեկամական հարաբերությունները,
ցանկանալով զարգացնել համագործակցությունը մշակույթի բնագավառում,
համաձայնեցին հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Պայմանավորվող կողմերը կզարգացնեն համագործակցությունը մշակույթի՝ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող տարբեր ոլորտներում, եւ նրանք հատկապես կխրախուսեն.

- անհատ կատարողների, թատերական, գեղարվեստական եւ ժողովրդական խմբերի փոխանակումները,
- համագործակցությունը կինոյի ոլորտում՝ ֆիլմերի փոխանակման կամ մյուս Պայմանավորվող կողմի կազմակերպած միջազգային կինոփառատոններին մասնակցելու միջոցով,
- գեղարվեստական ցուցահանդեսների փոխանակումը:

ՀՈԴՎԱԾ 2

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն համագործակցությունը եւ տեղեկության փոխանակումը երկու երկրների թանգարանների, գրադարանների եւ արխիվների միջեւ:

ՀՈԴՎԱԾ 3

Պայմանավորվող կողմերը կկազմակերպեն երկկողմ սեմինարներ եւ սիմպոզիումներ համապատասխան հասարակական եւ մասնագիտական հաստատությունների փորձագետների մասնակցությամբ, որոնք մասնագիտանում են մշակութային ժառանգության պահպանման խնդիրներով:

ՀՈԴՎԱԾ 4

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կաջակցի մյուս կողմի կազմակերպած մշակութային հարցերին նվիրված միջազգային գիտաժողովներին, մրցույթներին եւ հանդիպումներին իրենց ներկայացուցիչների մասնակցությամբ:

ՀՈԴՎԱԾ 5

1. Պայմանավորվող կողմերը համաձայնում են փոխադարձության հիման վրա իրենց մայրաքաղաքներում սկսել մշակութային կենտրոնների հիմնադրումը:
2. Պայմանավորվող կողմերը կստորագրեն առանձին համաձայնագիր՝ այդ կենտրոնների իրավական կարգավիճակը եւ գործունեության պայմանները սահմանելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 6

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն արվեստագետների փոխայցելությունները եւ

հանդիպումները, ինչպես նաև մասնագետների եւ փորձի փոխանակումները գեղարվեստի կրթության ոլորտում:

ՀՈՂՎԱԾ 7

1. Սույն Համաձայնագրի նպատակների իրագործման նպատակով Պայմանավորվող կողմերը կհիմնեն հայ-բրազիլիական Համատեղ հանձնաժողով, որը կկազմվի երկու երկրների ներկայացուցիչներից եւ հաջորդաբար նիստեր կգումարի Երեւանում եւ Բրազիլիայում՝ երեք տարին մեկ:

2. Հանձնաժողովը որոշումներ կընդունի՝ կապված սույն Համաձայնագրի կիրառման հետ: Հանձնաժողովը կմշակի համագործակցության ծրագրերի մանրամասները, ինչպես նաև այդ ծրագրերի ֆինանսական պայմանները:

ՀՈՂՎԱԾ 8

1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կծանուցի սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերի ավարտի մասին: Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմտնի վերջին ծանուցումը ստանալուց երեսուն /30/ օր հետո:

2. Սույն Համաձայնագիրը Պայմանավորվող կողմերի համաձայնությամբ կարող է փոփոխվել դիվանագիտական հայտագրերի փոխանակման միջոցով: Փոփոխությունները ուժի մեջ կմտնեն սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 9

1. Սույն Համաձայնագիրը կգործի հինգ տարի ժամկետով եւ ինքնաբերաբար կերկարաձգվի նույն ժամկետով, եթե Պայմանավորվող կողմերից որեւէ մեկը դիվանագիտական ուղիներով գրավոր չծանուցի մյուսին սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին: Սույն Համաձայնագրի գործողությունը կդադարեցվի վերջին ծանուցումն ստանալուց վեց /6/ ամիս հետո:

2. Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չի ազդի Համաձայնագրից բխող ծրագրի կամ նախագծի ավարտման վրա, եթե Պայմանավորվող կողմերը այլ բան չորոշեն:

Կատարված Է Բրազիլիա քաղաքում, 2002 թվականի մայիսի 7-ին, երկու բևօրինակով, հայերեն, պորտուգալերեն եւ անգլերեն, ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանության տարաձայնությունների դեպքում, անգլերեն տեքստը կգերակայի:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2007թ. նոյեմբերի 9-ից:

AGREEMENT

ON CULTURAL COOPERATION BETWEEN THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE GOVERNMENT OF FEDERATIVE REPUBLIC OF BRAZIL

The Government of the Republic of Armenia and the Government of the Federative Republic of Brazil, hereinafter referred to as the "Contacting Parties",

led by their wish to further develop and strengthen the friendly relations already existing between the two countries, wishing to develop the cooperation in the field of culture, have agreed upon the follows:

Article 1

The Contracting Parties shall develop cooperation in various cultural sectors of mutual interest and they shall especially encourage:

- exchanges of theatrical, artistic and folk groups and individual performers,
- cooperation in the field of cinema through the exchange of films or participation in the international film festivals organized by the other Contracting Party,
- exchanges of artistic exhibitions.

Article 2

The Contracting Parties shall encourage cooperation and the exchange of information between museums, libraries and archives of both countries.

Article 3

The Contracting Parties shall organize bilateral seminars and symposia with the participation of experts of the respective public and professional institutions, specialized on the subjects related to preserving cultural heritage.

Article 4

The Contracting Parties shall facilitate the participation of their representatives in international conferences, competitions and meetings on cultural matters organized by the other Contracting Party.

Article 5

1. The Contracting Parties agree to proceed on the bases of the reciprocity to the foundation of Cultural Centers in their respective capitals.

2. A special agreement shall be concluded between the Contracting Parties to determine the legal status and the conditions of functioning of the Centers.

Article 6

The Contracting Parties shall encourage the meetings and the exchanges of the artists, as well as the exchange of experience and specialists in the sector of artistic education.

Article 7

1. For the purpose of the implementation of this Agreement, the Contracting Parties shall establish a joint Armenian-Brazilian Committee, which shall be composed by representatives from both Contracting Parties and shall meet alternatively in Yerevan and Brazilia every three years.

2. The Committee shall consider matters relating to the application of this Agreement. It shall elaborate the details of programs of cooperation as well as their financial terms.

Article 8

1. Each Contracting Party shall notify the other about the completion of all necessary internal legal formalities for the approval of this Agreement, which shall enter into force thirty /30/ days after the reception of the last notification.

2. The present Agreement may be modified with the accordance of the Contracting Parties, by means of exchange of diplomatic notes. The modification shall enter into force according to paragraph 1 of the present Article.

Article 9

1. The present Agreement shall remain in force initially for 5 /five/ years, and shall be automatically renewed for the same period, unless one of the Contracting Party notifies the other, in writing, through diplomatic channels, of its intention to terminate it. Termination shall be effective 6 (six) months after the date of receipt of the notification.

2. The termination of the present Agreement shall not affect the conclusion of any undertaken program or project, unless the Contracting Parties decide otherwise.

Done in Brazilia on May 7 2002, in two originals, in the Armenian, Portuguese and English languages, all texts being equally authentic. In case of divergent interpretation, the English text shall prevail.

Agreement has entered into force on 09.11.2007.